

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Մարդկային կեանքի երկարատևութիւնը.

Կան մարդիկ, որոնք ափսոսանքով են յիշում անցած — գնացած երանելի ժամանակների մասին. նրանց կարծիքով թէպէտ այժմեան ժամանակակից կեանքը աւելի հարուստ, բազմակողմանի, բովանդակայից և գործունեայ է դարձել, բայց դրա փոխարէն մեր կենսական ոյժերը աւելի արագութեամբ են սպառւում, որի հետեանքը լինում է այն, որ մեր կեանքի երկարատևութիւնը պակասում է:

Բայց իրօք այսպէս է: Միթէ յերաւի ժամանակակից կեանքի պայմանների մէջ տեղի ունեցած նորագոյն բոլոր բարեխառնումները ոչ մի ազդեցութիւն չունեցան մեր կեանքի երկարատևութեան վրայ:

Թէ՛ հնումը և թէ՛ մեր օրերում երկար ապրելը մի անհասանելի և անհնարին բան չէ: Խոտոն ազգանունով մէկը 1712 թ. պատմական ճշգրիտ տեղեկութիւններ էր հաւաքում այն մարդկանց մասին, որոնց տարիքը 100-ից անց էր. ամենից հասակաւորներն էին՝ ունդարացի Զարաթներ և շոտլանդացի Կենտիգերներ, երկուսն էլ 185 տարեկան. մի ուրիշ շոտլանդացի, Ջենկինսոն ազգանունով մէկը 169 տարեկան էր, իսկ անգլիացի Պարբէն՝ 152 տ.:

Եթէ դիմելու լինենք բնագէտներին, որ լուրջ հետազոտութիւններ են կատարում մարդկային կեանքի երկարատևութեան վերաբերմամբ, կտեսնենք, որ նրանք համարեա միաբնական կեանքի բացարձակ երկարատևութիւնը հասցնում են հարիւրի: Ֆրանսիացի հռչակաւոր բնագէտ Բիւֆոնի կարծիքով իւրաքանչիւր մարդ պէտք է հասնի 100 տարեկան հասակին, եթէ միայն անբնական մահը կանոն չկերեզման չի տանի նրան. Ֆլուրենսի կարծիքով մարդս հինգ անգամ աւելի է ապրում, քան աճում է, այսինքն 5×20, ուրեմն 100 տարի: Ուրիշ գիտնականներ ևս, որոնք զբաղւում են այս հարցով, գալիս են նոյն եզրակացութեան:

Անհատի կեանքը որոշւում է նրանով, թէ նա ի՞նչ արժէք ունի ցեղի կեանքի համար: Ընդհանուր առմամբ կեանքը այն-

քան աւելի երկարատե է, որչափ աւելի դանդաղ է ընթանում աճեցողութիւնը, որչափ աւելի ուշ է հասնում հասունութիւնը և ընդունակութիւնը, և որչափ աւելի դժուար է սերունդի պահպանութեան հոգսը: Սպիտակ ցեղի քաղաքակրթ աղբերի համար կայ և ուրիշ հանգամանք՝ կուլտուրական հարստութիւնների ձեռք բերելը և նրանց յանձնելը յետադայ սերունդներին, որի պատճառով անձնական կեանքի երկարատեութեան պահանջը զգալի չափով աւելանում է: Այս բոլոր պահանջներին բաւականութիւն տալու համար մարդկային անձը պէտք է որ կենսական ոյժերի անսպառ պաշար ունենայ, որ և առանձնապէս նպաստաւոր պայմաններում միայն հարկւր տարի անցնելուց յետոյ սպառւում է: Բայց իրականութեան մէջ այս սահմանուած հասակին թէ՛ հնումը և թէ՛ ներկայում հասել է 10,000 մարդուց միայն մէկը: Իսկ ահագին մեծամասնութիւնը հեռու է մնացել կեանքի դադաթնակէտին հասնելու սահմանից, որովհետեւ նրանց ժամանակից առաջ դերեզման են տարել ամեն տեսակի անճշական աննպաստ պայմաններ՝ հիւանդութիւններ, դժբախտ դէպքեր, չափազանց յոգնածութիւն և կենսական ոյժերի չափից դուրս վատնում:

Եթէ մեզ ու մեզ հարց տանք, թէ մօտաւորապէս միջին հաշուով ի՞նչ հասակի կարող է հասնել մարդը, կտեսնենք, որ 70—80 տարեկան հասակը կհամարուի մարդկային կեանքի երկարատեութեան իդէալական հասակ:

Այսպիսով մենք գիտենք, որ ներկայումս էլ կան մարդիկ, որոնք հարիւրից աւելի են ապրում, բայց ընդհանրապէս 80 ամեայ հասակը շատերի համար եղել է ըզձալի մի փափազ, որին սակայն շատ քչերն են հասնում: Որպէս զի պատասխանելու լինենք սկզբից դրուած հարցին, առաջ այս հարցը պէտք է դնել՝ ներկայումս մարդկութիւնը աւելի է մօտենում միջին հաշուով կեանքի այս սահմանին, թէ՞ առաջ. կամ թերեւս նրանից հեռանում է:

Նախնական շրջաններից ապացոյցներ չունինք, որոնց օգնութեամբ կարելի լինէր որոշել, թէ միջին հաշուով որչափ էր կեանքի տևողութիւնը առաջ. բայց վերջին դարերի համար կան ճշգրիտ տեղեկութիւններ, չափաբերական մատեաններ, վիճակագրական աղիւսակներ, այլ և կեանքի ապահովագրական ընկերութիւնների կազմած հաշիւներ, որոնց բոլորի շնորհիւ կարելի է որոշ և ճիշտ եղրակացութիւնների հասնել:

Հիմնուելով որանց վրայ՝ Ֆալերը մի դարմանալի հետեանքի հասաւ. 1700 թուին կեանքի միջին տևողութիւնը

եղել է 31 տարի և 4 ամիս: Բայց աւելի ապշեցուցիչ է այն հանգամանքը, որ երկու հարիւր տարուայ ընթացքում նա բարձրացել է մինչև 40 տարի և 9 ամիս, այսինքն՝ աւելացել է մօտ 10 տարով: 1800 թուին կեանքի միջին տևողութիւնը 35 տարի և 6 ամիս էր, իսկ 1900 թուին՝ 40 տարի և 9 ամիս: Այնուհետև պարզուրում է, որ հարիւր տարի առաջ հարիւրից միայն 6 հոգի անցնում էին եօթանասունից, իսկ այժմ հարիւրից ութն են անցնում:

Քրիստոսի ծննդից սկսած հռոմայեցի և գերմանացի կայսրերից միայն չորսը հասան 80 տարեկան հասակի, այն ինչ Վիլհելմ կայսրը 92 տարեկան հասուկում վախճանուեցաւ: 300 պապերից միայն երեքը անցրին եօթնամսամեայ հասակը, այն ինչ Լեոն ԺԳ-ը 90 տարեկան վախճանուեց:

Մեզ շատ հեռու կտանէր, եթէ սկսէինք մէկ-մէկ յիշատակել այն բոլոր միջոցները, որոնք նպաստում են կեանքի երկարատևութեան:

Գուճեկանդի ասելով՝ պարզ կանոնաւոր, աշխատաւոր կեանքը ամենից աւելի յոյսեր ունի խորին ծերութեան հասնելու: զբաղմունքի տարբերութիւնը այս դէպքում այնքան էլ մեծ դեր չի խաղում, որովհետև դաշտում արիւն-քրտնքի մէջ աշխատող գիւղացին հաւասար մահերեւոյթի վրայ է կանգնած առանձնատենեակի լուրթեան մէջ աշխատող գիտնականի հետ, ինչպէս և աշխարհային հոգսերի մէջ ընկղմուած պետական գործիչի հետ: Իւրաքանչիւրը իւր զբաղմունքի համաձայն մարդու է իւր ոյժերը և որոշ ընթացք տալիս նրանց:

Տարաբաղդաբար չափահաս մարդիկ յաճախ քիչ ընդդիմադրութիւն են ցոյց տալիս վնասակար ազդեցութիւններին և ուտել-խմելիս հեշտութեամբ չափազանցութիւններին մէջ են ընկնում, որոնք օրհասական վախճան կարող են ունենալ:

Չառամեալ հասակին հասնելու համար իւրաքանչիւրը պէտք է լաւ չափի իւր արամադրութեան տակ գտնուած կենսական ոյժերը և ըստ այնմ՝ ուսուսի նրանց՝ ոչ չափազանց շատ և ոչ էլ չափազանց քիչ: Այն, ինչ որ մէկի համար կեանքի պահպանութեան գրաւական է, միւրի համար մահուան պատճառ կարող է լինել: Առանձնապէս նպաստաւոր պայմաններում գտնուելով՝ իւրաքանչիւր անհատ, ինչպէս առաջ, այնպէս էլ այժմ միշտ հնարաւորութիւն ունի խորին ծերութեան հասնելու, բայց ընդհանրապէս վերցրած ներկայումս կեանքի պայմանները շատ և շատ բարեկամող են դարձել, որ պարզ երևում է կեանքի տևողութեան աւելանալուց վերջին

դարերում: Կնշանակի՝ ժամանակակից կեանքը, համեմատած անցած գնացած հին դարերի հետ, ոչ միայն աւելի է հարստացել, բազմակողմանի դառել, աւելի բովանդակալից և դորժունեաց, այլ և աւելի է երկարել: Անհատկաժ սրա պատճառն այն է, որ ժամանակակից կենցաղավարութեան առողջապահական պայմանները չափազանց բարելաւուել են: Բաւական է միայն յիշել, թէ առաջ սրչափ շատ զոհեր էին տանում ժանտախտը, ծաղիկը, դիֆտերիա, խոլերան, արիւնի թունաւորումը իւր բազմապիսի ձեւերով և այլն. չմոռանանք յիշատակելու, թէ համաճարակները այժմ ինչպէս հէնց բնումը խեղդւում են. քանի գնում է, այնքան աւելի ապահով և անվտանգ է դառնում մարդու կեանքը:

Ինչ վերաբերում է վայրենի ցեղերին, նրանք շատ աւելի քիչ են ապրում. շուտ են հասունանում, սերունդի մասին շատ քիչ հոգս ունին և շուտ էլ ծերանում են: Ճ'աւա կըղզու վրայ 15 տ. աղջիկը արդէն պառաւած է համարւում:

Վերջացնելով մեր խօսքը՝ կասենք, որ մարդկութեան առաջագիմութեան հետ միասին երկարակեցութիւնն էլ աւելանում է և այսուհետեւ 100 և աւելի տարի ապրող անհատները թիւը զգալի չափով կաւելանայ՝ ընդհանուր միջին երկարակեցութեան հետ միասին:

Թարգմ. Вокругъ Свѣта—№ 4. 1912

Յ. Դր.

